ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

II

ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

DOI:10.54503/2953-805X-2023.5-109

Սմբատ Հակոբյան
ՀԱԻ

ՄԱՀԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵՅՍԲՈՒՔՈՒՄ. ԱՎԱՆԴԱԿԱ՞Ն, ՄՈԴԵ՞ՌՆ, ԹԵ՞ ՊՈՍՏՄՈԴԵՌՆ ՍՈՒԳ

Վերջին տասնամյակներում թվային տեխնոլոգիաներն աստիճանաբար ավելի ու ավելի շատ տեղ են զբաղեցնում մարդկանց կյանքում, և մարդու գործունեության տարբեր ոլորտները ցանցից դուրս/անցանց տարածությունից տեղափոխվում են առցանց: Ժամանակակից աշխարհում մահը նույնպես առցանց տիրույթի մաս է կազմում, և մասնավորապես շատ են ուսումնասիրությունները, որոնք քննարկում են մահվան առցանց ծեսերը և դիսկուրսները, որոնք գերազանցապես առնչվում են հիշատակին, սուգ և վիշտ արտահայտելուն: Հայկական (նկատի ունենք ֆեյսբուքյան այն տիրույթը, որտեղ մարդիկ կատարում են հայատառ կամ լատինատառ հայալեզու գրառումներ) ֆեյսբուքում նույնպես կարելի է հանդիպել բազմաթիվ նմանատիպ գրառումների, որոնք դեռևս չեն հետազոտվել:

Սույն աշխատանքի նպատակն է՝ կիրառելով հիմնավորված տեսության մեթոդը՝ վեր հանել հայկական ֆեյսբուքում առկա սգի և վշտի պրակտիկաները, դրանց առանձնահատկություններն ու տարբերությունները՝ հիմնականում անգլիալեզու սոցիալական ցանցերի ուսումնասիրությունների ու դրանց հիման վրա մշակված տեսական մոտեցումների համեմատությամբ:

Հիմնաբառեր՝ թվային մարդաբանություն, թվային մահ, սոցիալական ցանցեր, ֆեյսբուք, առցանց սուգ և վիշտ:

Մահը համացանցի ժամանակաշրջանում

Վերջին երկու տասնամյակում համացանցի և թվային տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրեց նրան, որ մահը և մահվան հետ կապված շատ երևույթներ ցանցից դուրս տարածությունից տեղափոխվեցին առցանց: Այսօր վեր տիրույթում կարելի է հանդիպել մահվանն առնչվող բազմապիսի կայքերի, որոնցից են, օրինակ, այսպես կոչված վեր գերեզմանները, որտեղ հանգուցյալի հարազատները կարող են տեղադրել հիշողություններ, հաճախ տեքստերի, իսկ երբեմն էլ՝ պատկերների կամ ձայնի տեքսով[1]: Ներկայումս մահվանն առնչվող ամենատարածված և ամենամեծ բովանդակություն պարունակող կայքերը սոցիալական ցանցերն են, որոնք, ի տարբերություն վեր գերեզմանների և հիշատակի կայքերի, ավելի ինտերակտիվ են[2]:

Չնայած մահվանը նվիրված կայքերի բազմազանությանը, գիտական գրականության մեջ համացանցի և մահվան առնչությունները ուսումնասիրող հեղինակները, ինչպես նաև այն հետազոտողները, որոնք ուսումնասիրում են

---

1 Klaassens et al. 2014, 283–284.

2 Brubaker et al. 2013, 160.

«թվային ծեսը», առավել մեծ տեղ են տալիս սգի, վշտի և հիշատակման թեմային: Սա ունի իր օբյեկտիվ հիմքերը, քանի որ վիրտուալ միջավայրում հենց այս երևույթներն են ամենատարածվածը: Համացանցի զարգացումն ու տարածումը հանգեցրեց նրան, որ առցանց տարածությունը դարձավ սուգ և վիշտ արտահայտելու նոր ու կարևոր տարածք:

Սույն հետազոտությունը նվիրված է հենց հայկական ֆեյսբուքյան տիրույթում սգի և վշտի պրակտիկաների ու խոսույթների ուսումնասիրմանը: Հայկական ֆեյսբուք ասելով՝ մենք նկատի ունենք հայալեզու (հայատառ և լատինատառ) գրառումները, որոնք իրականացվել են Հայաստանում բնակվող օգտատերերի կողմից:

Մեթոդաբանություն

Քանի որ սա հայկական միջավայրում նմանատիպ հետազոտություն իրականացնելու առաջին փորձն է, նախ նպատակ ենք հետապնդում՝ տալ ընդհանուր պատկերը, թե ի՛նչ են իրենցից ներկայացնում սուգը և հիշատակումը հայկական ֆեյսբուքյան տիրույթում: Այս նպատակով վերլուծել ենք ավելի քան 900 գրառում՝ կիրառելով հիմնավորված տեսության մեթոդաբանությունը[3]: Նախ գրառումները կոդավորվել են բաց եղանակով, ինչից հետո առանցքային կոդավորում ենք արել կոդավորված նյութի և անգլիալեզու գրականության մեջ առկա հիմնական թեմաների և քննարկումների միջև: Կփորձենք ցույց տալ, թե ինչպիսի առանձնահատկություն ունեն հայկական ֆեսյբուքյան հուշերը՝ համեմատելով դրանք Արևմուտքում, մեծ մասամբ ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում իրականացված ուսումնասիրությունների և մեր դիտարկած անգլիալեզու գրառումների հետ: Այս համեմատության նպատակն է՝ փորձել հասկանալ, թե ինչպիսի սոցիալական, մշակութային և պատմական առանձնահատկություն են արտացոլում այս գրառումները: Մինչ այդ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում սուգը և վիշտը սոցիալական, հումանիտար տեսական ուսումնասիրություններում:

Սուգ և վիշտ

Սուգը ձևակերպվում է որպես կորստի զգացում, որը մարդիկ ունենում են սիրելի անձի մահվանից հետո: Սարնդերսենը և Զեոնգը նշում են, որ սուգն ընտանիքի անդամի կամ էլ ընկերոջ կորստի բնական ռեակցիան է, Սթրոբը և Շատը, ինչպես նաև Ռեբեկկա Հասսմանը սուգը բնութագրում են որպես միջոց, որով մարդիկ առերեսվում և դիմակայում են մահվան իրականությանը. սգացողները պետք է մշակեն միջոցներ, որոնք կօգնեն կարգավորելու իրենց կյանքն առանց մահացած հարազատի, և չտրվեն պաթոլոգիկ ախտանիշների:

Ժամանակային առումով՝ սգի տեսությունները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը սուգը դիտարկում է որպես գծային գործընթաց, որի արդյունքում հարազատին կորցրած մարդն անցնում է որոշակի փուլերով և վերջում

[3] Տես Страусе, Корбин 2001.

դադարում է սգալ: Ըստ Ֆրեյդի՝ սգալու դժվարին գործընթացը պիտի անպայման ունենա ավարտ, որից հետո անձը ազատվում է ցավից, հակառակ դեպքում՝ սուգը դառնում է պաթոլոգիկ[4]: Սգի ժամանակակից տեսությունների մեծ մասը մերժում է այն որպես գծային մի գործընթաց ընկալելու մոտեցումը: Սուգը այսօր դիտարկվում է ավելի շատ որպես շարունակական սոցիալական գործընթաց, որը չունի վերջնակետ: Դեռ ավելին, որոշակի համայնքում սգալը ցույց է տալիս, որ սուգն ամենից շատ օգնում է այն ժամանակ, երբ այն շարունակական և չվերջացող է[5]:

Սգի փուլայնությունը և ժամանակային բնույթը քննվում են ոչ միայն անհատական, հոգեբանական մակարդակներում: Որոշ հետազոտողներ այս հարցը դիտարկում են պատմական և հասարակական ենթատեքստում: Սգալու և հիշատակման ավանդական ծեսերը ֆորմալ են եղել, սգացողները ունեցել են հստակ որոշված դերեր, իսկ երկար ժամանակ սգալն ընդունված չի եղել: Մինչև 1970-ականները՝ վիշտն ընտանիքներում անձնական փորձառություն էր, որից պետք էր արագորեն ազատվել: Ի տարբերություն մոդեռնիզմի շրջանի, երբ սգին մոտենում էին շատ ռացիոնալ, պոստմոդեռն ժամանակաշրջանում երկարաժամկետ վիշտը խրախուսվում է, իսկ սոցիալական մեդիան դառնում է այս ամենի մասին տեղեկությամբ կիսվելու, նոր պրակտիկաներ իրականացնելու և իմաստներ ստեղծելու միջոց[6]: Սգի պատմական փուլայնությանը դեռ կանդրադառնանք, երբ վերլուծենք հայկական ֆեյսբուքում դրա առանձնահատկությունները:

Ֆեյսբուքը որպես մահվան և սգալու նոր տարածք

Ուսումնասիրողները ֆեյսբուքի հուշերը համեմատում են գերեզմանային այգու հետ, որտեղ մարդիկ նշում են կյանքը և շփվում մահացածների հետ, իսկ երբեմն էլ առցանց գրառումները նմանեցնում են ճանապարհի եզրին տեղադրված հուշաքարերի, երբ մահը գերեզմանից տեղափոխվում է փողոց[7]: Անցանց և առցանց տարածքների համեմատությունը, նմանություններ և տարբերություններ փնտրելը, կարելի է ասել, դարձել է յուրատեսակ մեթոդ, և կա կարծիք, որ մարդիկ ոչ թե ընտրություն են կատարում առցանց և անցանց սգի միջև, այլ առցանց սուգը շարունակում և ընդլայնում է այն, ինչ սովորաբար մարդիկ արել են ցանցից դուրս[8]:

Առաջին նկատելի գործառույթը և առանձնահատկությունը, որ ֆեյսբուքը սկսում է կրել՝ մահվան լուրը տարածելն է սոցիալական ցանցի միջոցով: Նախքան թվային տեխնոլոգիաների և սոցիալական ցանցերի զարգացումը՝

---

4 Hussman 2014, 16–17.

5 Hussman 2014, 17–18.

6 Cesare, Jennifer 2017, 2–3; Vries, Rutherford 2004, 7–8. Երբեմն շարունակվող կապերի տեսության քննադատներն անհանգստանում են, որ թվային հիշատակումը խանգարում է բաց թողնել հանգուցյալին (Walter 2015, 227):

7 Walter et al. 2012, 285.

8 Roberts 2004, 72.

մահվան մասին տեղեկացնելու ամենատարածված ձևերը թերթերի մահախոսականները և հեռախոսազանգերն էին[9], սակայն այժմ մենք գերազանցապես համացանցից ենք տեղեկանում որևէ մեկի մահվան մասին: Այստեղ մարդիկ՝ հիմնականում մահացածի մոտ հարազատները, կարող են կիսվել ոչ միայն ուղղակի կորստի փաստով, այլև տեղեկացնել, թե երբ ու որտե՞ղ տեղի կունենան հոգեհանգստի և հուղարկավորության արարողությունները:

«*1 օրվա տարբերությամբ կորցրեցի երկու տատիս էլ: Լույս իջնի հոգիներին*»:

«*Երեկ պապիկս մահացավ... Հոգեհանգիստը տեղի կունենա վաղը՝ ապրիլի 4-ին, ժ. 18.00–20.30 Բաբլոյան հիվանդանոցին կից սգո սրահում: Հասցեն՝ Մամիկոնյանց 30*»:

«*Իմ Լույսն ու իմաստը՝ Հայրս... մահացավ: Էս դատարկությունը երբեք չի լցվի*

...Հոգեհանգիստը Կիրակի՝ ժ. 18.00, Նոր Նորքի Սբ. Սարգիս եկեղեցում: Հուղարկավորությունը՝ Երկուշաբթի՝13.30-ին Սբ. Սարգիս եկեղեցում»:

Ավանդաբար սուգն ավելի շատ արտահայտվել է որոշակի ժամանակում, հատկապես՝ թաղման ծեսի ընթացքում կամ դրան հաջորդող շրջանում, սակայն, ըստ հետազոտողների մեծ մասի, սոցիալական ցանցերն ընդլայնում են այս ընթացքը. այժմ մարդիկ կարող են կիսվել իրենց զգացմունքներով տարբեր ժամանակահատվածներում[10]: Հայկական ֆեյսբուքում սգի գրառումներ ուսումնասիրելիս՝ թեև կարելի է հանդիպել որոշ գրառումների, որոնք կատարվում են առանց որևէ առիթի, սակայն դրանց մեծագույն մասը առնչվում է կամ անմիջապես մահվանը հաջորդող ժամանակահատվածին, երբ գրառում կատարողը նոր է տեղեկանում մահվան մասին, կամ էլ որևէ հիշատակի օրվա՝ լինի դա հանգուցյալի ծննդյան, մահվան տարեդարձ, կամ էլ որոշակի տոն, օրինակ՝ Նոր տարի:

«*14 տարի կլինի, ինչ իմ ամենաախելացի, իմ ամենաժպտերես ու ուրախ սանս՝ Դավիթ Մարտիրոսյանը Երկնքում է: Չհասցրեցի հերթական դասի գրքույկը հանձնել իրեն: Իսկ սա իր շարադրությունն է ... 5-րդ դասարանցի Դավիթը ավելի էր կարևորում այս գիտելիքների ուսուցումը, քան մի ամբողջ ԿԳՆ .....*»:

«*Մարդիկ կան, որոնք անփոխարինելի են ու իրենց հեռանալուց հետո, հատկապես, երբ հեռանում են անսպասելի. միշտ զգալու ես իրենց բացակայությունը... Անսովոր է, որ չեմ զանգելու, չեմ խոսելու... Շնորհավոր տարեդարձ, Աննա ջան...*»:

«*Այսօր Պրոֆեսորը կդառնար 92 տարեկան!!!*»

Փաստացի հայկական ֆեյսբուքը պահպանում է սգալու ավելի ընդգծված և հստակ ժամանակային մոդել՝ ի տարբերություն անգլիալեզու տարածքում իրականացված այն ուսումնասիրությունների, որոնք պնդում են, թե սոցիալական ցանցերում այլևս հստակ սգալու ժամանակ չկա:

9 Willis, Ferrucci 2017, 2.

10 Brubaker et al. 2013, 160.

Կապերի շարունակություն և հաղորդակցություն հանգուցյալի հետ

Համարվում է, որ ավանդաբար սգացողները իրենց խոսքն ուղղում էին համայքին, մինչդեռ թվայինի դեպքում սգացողների համայնքը ուշադրությունը տեղափոխում է հանգուցյալի հետ հաղորդակցվելու վրա[11]: Սոցիալական ցանցերում մենք հաճախ կարող ենք հանդիպել գրառումների, որոնցում սգացողը, դիմելով անմիջապես հանգուցյալին, շարունակում է հաղորդակցության ծեսը, որպեսզի պահպանի հարաբերությունների իրականությունը և կապը մահացածի հետ[12]: Փոխվում է նաև լեզուն, որով մարդիկ հաղորդակցվում են հանգուցյալի հետ, սոցցանցերում մահացածին դիմելը ավելի ոչ-ֆորմալ է, քան, օրինակ, թերթերում[13]:

«*Սիրելի Տիգրան ձյաձյաս, լույսի մեջ մնաս… Շնորհակալ եմ, որ պատանեկությունից մինչև այսօր նաև ինձ համար հայր եղար*»:

«*Շնորհավոր ծնունդդ իմ կյանք, շատ ենք քեզ կարոտում, ամեն օր ավելի շատ… ԴՈՒ գիտես քեզ ինչքան շատ ենք սիրել ու ինչքան բարդա մեզ շարունակել ապրել առանց քեզ… Ասփված հոգիդ լուսավորի իմ դրական Պաչում եմ…*»:

Նմանատիպ գրառումների մեծ մասն այնպես է գրված, որ կարծես հանգուցյալը կարող է դրանք կարդալ, այս երևույթն անվանվել է «տրանսկորպորեալ հաղորդակցություն» (“Transcorporeal Communication”), և չնայած շատերը կարող են կարդալ այդ հաղորդագրությունները, դրանց սկզբնական հասցեատերը հանգուցյալն է, որը դա անել չի կարող[14]: Այս առումով նմանատիպ գրառումները համեմատվում են կրոնական աղոթքի հետ, որտեղ հասցեատիրոջ ստանալու փաստը նույնպես մնում է անորոշ, սակայն մարդիկ, միևնույն է, ուղղում են իրենց աղոթքը որոշակի «ուժի»[15]:

Մարդիկ կարող են ոչ միայն որոշակի խոսք ասել հանգուցյալին, այլև նշել նրան իրենց գրառման մեջ: Սովորաբար ինչ-որ մեկին ֆեյսբուքում նշում ենք, երբ ցանկանում ենք այդ մարդուն որևէ բան ցույց տալ: Այս պարագայում թեև անձը մահացած է և չի կարող տեսնել, կարդալ ու պատասխանել գրառմանը, այնուամենայնիվ, նա հաղորդագրության և գրառում կատարողի մտքերի, հույզերի հասցեատերն է: Մյուս կողմից էլ՝ նշելը մեկ այլ նշանակություն է ձեռք բերում, երբ գրառում կատարողի ընկերները տեսնում են հանգուցյալի էջը և այն այցելելով կարող են ծանոթանալ մահացածի կենսագրությանը, նկարներին, մտքերին, նախասիրություններին նև: Այս առումով ֆեյսբուքը ավելի ինտենսիվ և ավելի խորը կապ է ստեղծում հանգուցյալի ինքնության և այն սոցիալական միջավայրի միջև, որում կատարվում է գրառումը: Ավանդական թաղման ծեսերում մահացածի ինքնության ցուցիչները մեծ մասամբ երևում

[11] Church 2013, 187–188.

[12] Brubaker et al. 2013, 153–155.

[13] Walter 2015, 226–227.

[14] Degroot 2012, 198.

[15] Hussman 2014, 26.

էին, երբ նրա մասին խոսք էին ասում հողին հանձնելուց առաջ կամ էլ անձնական զրույցների ժամանակ, իսկ այժմ ֆեյսբուքը թույլ է տալիս հասանելի պահել հանգուցյալին ամեն պահ՝ այնպես, որ այս կապը դառնում է առօրեական[16]:

Անհատական և համայնքային սուգ

Ավանդաբար հանգուցյալի հետ կապ պահելը և սգալը շատ անձնական, նույնիսկ թաքուն փորձառություններ են եղել, դրանք կարգավորվել են ոչ թե հանրային խոսույթի դաշտում, այլ ընտանիքի կամ համայնքի կողմից, սակայն ֆեյսբուքը փոփոխություն է մտցնում այս դաշտում: 21-րդ դարում մարդիկ անձնական սուգը, վիշտը, ինչպես նաև հարաբերությունները հանգուցյալ հարազատի հետ սկսում են արտահատել հանրայնորեն[17]: Վիրտուալ գերեզմաններում արված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սգի պրակտիկաներն այնտեղ ավելի շատ նման են ոչ արևմտյան ձևերին, քանի որ միաժամանակ ներառող, անմիջական և հանրային են[18]:

Տեսաբանները համարում են, որ սոցիալական ցանցերը և մասնավորապես ֆեյսբուքը նաև օգնում են, որպեսզի մարդիկ իրենց հույզերն ու զգացմունքներն էլ ավելի հեշտ արտահայտեն. այստեղ մարդիկ դեմառդեմ չեն սգում, որպեսզի հետևեն ընդունված նորմերին և իրականացնեն ֆորմալ գործողություններ: Սուգը այս պարագայում արտահայտվում է անձնապես, իսկ զգացմունքներն արտահայտելը դառնում է ավելի «անվտանգ»[19]: Մեկ այլ ասպեկտ, որն օգնում է առավել հեշտ արտահայտելու ցավն ու ապրումները՝ ծեսի տեքստային բնույթն է[20]: Ընդհանրապես, համարվում է, որ պոստմոդեռն շրջանում ֆորմալ ծեսերը նվազում են, քանի որ շեշտադրումն արդեն անհատականության վրա է, այսինքն՝ մարդիկ սգալուց անպայման չեն հետևում հանրույթի սահմանած նորմերին ու ցույց են տալիս իրենց ապրումները, մտքերը և զգացմունքները անձնական մակարդակում: Այս պարագայում ծեսն ավելի շատ փոխարինվում է խոսույթով, սակայն ոչ բոլոր ուսումնասիրողներն են այս մոտեցմանը համաձայն: Մելիսսա Իրվինը[21] նշում է, որ ոչ թե ծեսը վերացել է, այլ տեղափոխվել է առցանց տարածք, որտեղ մենք կարող ենք տեսնել թե՛ անհատականությունը, թե՛ ուշադրությունը դեպի խոսույթ և թե՛ ավանդական ծեսը:

Եթե փորձենք այս տեսական քննարկումները տեղափոխել հայկական ֆեյսբուքյան գրառումների դաշտ, ապա կտեսնենք, որ իրականում վերոնշյալ շատ փոփոխություններ այդպես էլ տեղի չեն ունեցել: Թեև գրառումների մի հատված իրոք արտահայտում է հուզականություն և տեղափոխում է անձնական սուգը հանրային դաշտ, սակայն իր ընդհանուր տրամաբանության մեջ

16 Hussman 2014, 25.

17 Irwin 2015, 122–123, 141.

18 Hussman 2014, 10.

19 Degroot 2012, 198.

20 Vries et al. 2004, 8.

21 Irwin 2015, 141.

հայկական ֆեյսբուքի գրառումները մնում են բավական ֆորմալ և լակոնիկ: Ի տարբերություն անգլիալեզու ֆեյսբուքի, որտեղ մարդիկ իսկապես շատ ավելի ազատ են արտահայտում իրենց ապրումներն ու ցավը, հայկական ֆեյսբուքը մնում է առավել պահպանողական: Մասնավորապես, սա կարելի է նկատել մահվան լուրի մեկնաբանությունները համեմատելով, որի դեպքում անգլիալեզու գրառումներն առանձնանում են անհատական հիշողությունները նշելով, վիշտն ավելի մանրամասն նկարագրելով, իսկ հայալեզու ֆեյսբուքում մեկնաբանությունների մեծ մասն արտահայտում է ֆորմալ ցավակցություն և մանրամասնորեն ապրումները չի նկարագրում: Այս պարագայում սուգը գերազանցապես չի դառնում անձնական մի բան, որը կարող է արտահայտվել հանրայնորեն, մարդիկ ավելի շատ հետևում են համայնքային խմբին բնորոշ վարքագծի և սահմանափակվում վիշտ արտահայտելու ավելի կոնվենցիոնալ ձևերով:

Մեկ այլ կետ, որտեղ մենք կարող ենք տեսնել, որ սուգը հայկական ֆեյսբուքում չունի անհատական բնույթ, համեմատությունն է այն բանի, թե որքան հաճախ են մարդիկ գրառում կատարում իրենց մահացած հարազատի և որքան՝ հայտնի մարդկանց կամ հանրային նշանակություն ունեցող մահերի վերաբերյալ: Վերջիններս կարող են լինել զինվորներ, դժբախտ պատահարից մահացածներ ևն: Մեր ուսումնասիրած 694 գրառումներից 412-ը նվիրված է եղել որևէ հայտնի անձի կամ հանրային նշանակություն ունեցող մահվան, և միայն 282 գրառումներն էին ուղղված այն մարդկանց, որոնց օգտատերը անձամբ ճանաչել է: Սա ցույց է տալիս, որ մարդիկ ֆեյսբուքում ավելի հեշտ են գրառում կատարում այն մահերի մասին, որոնց հետ չունեն անձնական կապվածություն: Այս պարագայում սգի արտահայտումը տեղի չի ունենում անհատական մակարդակում, այստեղ ավելի շատ գործ ունենք սգացողների համայնքի հետ, երբ գրառում կատարողները խոսք են ուղղում որևէ դերասանի, երգչի կամ էլ զինվորի մահվան առիթով:

«*Անկարագրելի ցավ եմ ապրում: Արման Կիրակոսյանը լքեց մեզ: Մեծ մարդ, գիտնական, ընկեր, համախոհ ու պարզապես Արման Ջոնի Կիրակոսյան, ով մարմնավորում է մի սերունդ, կենսակերպ, գերդասպան ու ժողովուրդ*»:

«*...ուղղակի անչափելի կորուստ մեր մշակույթի համար: Չգիտեմ ով կարող է իր գործը շարունակել*»:

Ավանդական, մոդեռն և պոստմոդեռն

Գալով մեր հետազոտության այն հարցադրմանը, թե ինչո՞վ են հայկական ֆեսյբուքյան գրառումները տարբերվում անգլիալեզու ցանցերի գրառումներից, և ի՞նչ է այդ տարբերությունը ցույց տալիս, կցանկանայինք օգտագործել Թոնի Ուոլտերի առաջարկած մահվան ժամանակագրության փուլերի բաժանումը՝ ավանդական, մոդեռն և պոստմոդեռն: Ավանդականի ժամանակ մահը հանրային և համայնական երևույթ էր, սերտ առնչություն ուներ կրոնական խոսույթի և ծիսական պրատիկաների հետ: Մոդեռնիզմը իր հետ բերում է աշխարհիկացում, անձնական տարածք, իսկ մահը սկսում է հաճախ տեղի ունենալ հիվանդանոցներում: Պոստմոդեռն ժամանակաշրջանում անձնական ու հանրա-

յին տարածքները բախվում են, մահն ու սուգը դառնում են հանրային՝ որպես անհատականության դրսևորում, որտեղ կորուստ ունեցողների սգի անհատական արտահայտումը գերադասվում է ողջերի և հանգուցյալի հարաբերությունների կառուցումից[22]: Մեկ այլ ձևակերպմամբ՝ մինչմոդեռն հանրույթները ստեղծում էին սգացող համայնքներ, մոդեռն հանրույթները՝ սգացող անհատների, իսկ ետմոդեռն ժամանակում՝ փոխադարձ օգնության (առցանց և անցանց) խմբեր[23]:

Այսպիսով, յուրաքանչյուր ժամանակահատված ունի սգալու որոշակի և իրեն բնորոշ սոցիալական տարածվածություն ու տարածք: Բացի այդ, պոստմոդեռն շրջանում և հատկապես թվային տեխնոլոգիաների ու սոցիալական ցանցերի տարածմանը զուգընթաց՝ սուգը դառնում է ավելի բազմազան, և եթե ցանցից դուրս կյանքում կան սգալու էթիկետներ, նորմեր ու կանոններ, ապա սոցիալական ցանցերում մարդիկ սգում են տարբեր ձևերով[24]: Այս բազմազանությունը դրսևորվում է նաև զգացմունքների առումով. ի տարբերություն մոդեռնիզմի շրջանի, երբ մարդիկ պարտավորված էին հանրային դաշտում լինելու զուսպ և միայն անձնական տարածքում արտահայտելու հույզերը, համարվում է, որ այժմ սուգը հանրային է տարածության առումով և անհատական (բազմազան)՝ կատարմամբ: Մարդիկ սգում են մի միջավայրում (թվային), որը բաց է: Այստեղ նրանց հույզերին և մտքերին, որոնք արդեն ֆորմալ և խիստ սահմանված չեն, ինչպես ավանդական շրջանում, կարող են ծանոթանալ նույնիսկ անծանոթ մարդիկ: Այս տեսությունները զուգորդելով հայկական ֆեյսբուքյան իրականության հետ՝ մենք տեսանք, որ մարդիկ գերազանցապես ազատորեն չեն արտահայտում զգացմունքները, մանրամասն և խորապես չեն գրում իրենց ունեցած ցավի կամ հիշողությունների մասին: Սգո առցանց ծեսերը մեծ մասամբ մնում են բավական ֆորմալ: Հայկական ֆեյսբուքում սուգը ավելի շատ ստանում է մոդեռնիզմին հատուկ անձնականություն և ավանդականին հատուկ ֆորմալ բնույթ, և որպեսզի հասկանանք, թե ինչու թվային դարաշրջանում չունենք պոստմոդեռնիստական սուգ, փորձենք դուրս գալ առցանց տարածությունից և տեսնել, թե ո՞ր կետերում է առցանց սուգը տարբերվում և նմանվում անցանցին, ինչպես նաև, թե ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել վերջին տարիներին, որոնք ազդել են սգալու պրակտիկաների վրա:

Դեռ մի քանի տարի առաջ երևանյան բակերում թաղումների ժամանակ սգացող և ողբացող մարդկանց տեսնելը սովորական պատկեր էր: Այստեղ ոչ ոք չէր խուսափում զգացմունքներն արտահայտելուց, կանայք բարձրաձայն ողբում էին, տղամարդիկ հաճախ լուռ լալիս էին դագաղի մոտ: Սուգը պահպանում էր իր ավանդական՝ համայնքային բնույթը, մարդիկ թեև շատ էին զգացմունքներ և ցավ արտահայտում, սակայն այդ ամենը ծիսական և ֆորմալ էր:

22 Walter et al. 2012, 153.

23 Walter et al. 2012, 289.

24 Walter et al. 2012, 291.

Օրինակ՝ կային հստակ ընդգծված ժամանակահատվածներ, թե երբ կարելի է սգալ ավելի ուժգին և երբ՝ ոչ այնքան: Բացի համայնականից, սուգը միևնույն ժամանակ հանրային էր, քանի որ թաղմանը մասնակցում էին նույնիսկ ոչ այնքան մտերիմ հարևաններ, իսկ սգի որոշակի ընթացքում, երբ դագաղը դրվում էր շենքի բակում, կարելի էր հետևել հարևան շենքերի պատշգամբներից և պատուհաններից: 2015 թ. սկսած, երբ Երևանում կառուցվեցին բազմաթիվ սգո սրահներ, թաղման ծեսը բնակարաններից աստիճանաբար տեղափոխվեց այդտեղ՝ ստեղծելով սգի ավելի մոդեռնիստական՝ անձնական պրակտիկաներ և տարածք: Այստեղ հստակ սահմանագիծ դրվեց մահվան և աշխարհների միջև, վիշտը տեսանելի էր միայն մահվան համար նախատեսված վայրերում և միայն այն մարդկանց համար, որոնք մտնում են այդ տարածք, որի արդյունքում այն դադարում է լինել հանրային, սակայն պահպանում է համայնքային որոշ հատկանիշներ՝ կապված մարդկանց սոցիալական կապերով: Բացի վերոնշյալից, սուգն, ըստ էության, սրահներում արտահայտվում է ավելի թույլ, դա երևում է թե՛ հենց ծեսերի դիտարկումներից և թե՛ մարդկանց հետ զրույցներից: Հարազատին կորցրած անձինք այլևս նույնքան ուժգին չեն լալիս և վիշտը նույնքան արտահայտիչ չէ, որքան բնակարաններում կամ բակերում:

«*Ես, օրինակ, չեմ ընդունում էր սգո սրահները, մարդիկ հավաքվում են, իրար նորմալ չեն ճանաչում, չեն լացում մի հատ նորմալ իրանց մեռելի վրա*» (*46 տարեկան տղամարդ, գործազուրկ*):

«*Իմ մոտ ընենց տպավորություն էր, որ չեմ կարողանում զգացմունքներս արտահայտեմ, մի տեսակ բան էի, կաշկանդված էի, մարդկանցից էր կարող ա ճնշված կարող ա էտ տեղից էր, հենց եկա տուն էտ օրը նոր նորմալ լացեցի*» (*26 տարեկան կին, ուսուցչուհի*):

Եզրակացություն

Այսպիսով, մի կողմից տեսնում ենք, որ զգացմունքային առումով՝ սուգը դրսևորվում էր միայն այն թաղումների ժամանակ, որոնք անցկացվում էին տանը: Այն չի տեղափոխվում սգո սրահներ և սոցիալական ցանցեր: Առցանց տարածքում սուգը չի ստանում բազմազանություն և անհատականություն, այն մնում է բավական ֆորմալ, լակոնիկ և զուսպ՝ զրկվելով նաև այն զգացմունքայնությունից, որն ուներ տներում: Համեմատելով սգալու առցանց պրակտիկաները Արևմուտքում և Հայաստանում՝ պետք է նշել, որ այս տարբերությունը, մեր կարծիքով, առաջանում է, քանի որ մեզ մոտ չկան զարգացման այն փուլերը, որոնք եղել են Արևմուտքում: Այնտեղ 20-րդ դարասկզբից՝ սուգը և մահն անցնում են մոդեռն զարգացման փուլեր, ինչի հետևանքով վիշտ կամ սուգ արտահայտելը դառնում է ոչ թե հանրային, այլ անձնական փորձառություն, սակայն միևնույն է՝ մարդիկ կարիք ունեն իրենց ապրումներով և ցավով կիսվելու շրջապատի հետ, և երբ գալիս են թվային տեխնոլոգիաները, և ստեղծվում են սգալու առցանց տարածքներ, նրանք արտահայտում են իրենց զգացմունքները՝ առանց կաշկանդվելու կամ հետևելու ֆորմալ ծեսերին, քանի որ, որպես հանրույթներ, նրանք նաև ավելի անհատակենտրոն են: Մեր տարբերակում երեք

ժամանակները՝ ավանդական, մոդեռն և պոստմոդեռն, կարծես թե միախառնվել են իրար: Մի կողմից դեռ ոչ վաղ անցյալում սուգն ուներ շատ ավանդական՝ ծիսական, ֆորմալ և համայնքային բնույթ, դրա հետ մեկտեղ, երբ թաղումները տեղափոխվում են սգո սրահներ, սուգը ստանում է մոդեռն հատկանիշներ: Այս ամենին հավելվում է նաև այն, որ մենք ապրում ենք թվային տեխնոլոգիաների ժամանակաշրջանում և ունենք սոցիալական ցանցեր, որոնք ենթադրաբար պիտի բերեին պոստմոդեռն սգալու եղանակներ, որոնք, սակայն, տեղի չեն ունենում: Ըստ էության, հայալեզու առցանց տարածքում մարդիկ դեռ պահպանում են սգի ավանդական՝ համայնքային և ֆորմալ ընկալումները, այն չի դառնում անհատական ու բազմազան, քանի որ մենք, որպես հանրույթ, դեռևս չունենք այդպիսի զարգացում: Մյուս կողմից, այն զգացմունքայնության առումով դրսևորում է մոդեռնիզմին հատուկ զսպվածություն, երբ մարդիկ հանրայնորեն չեն արտահայտում կորստի ցավը, սակայն այս ամենը հասկանալի է դառնում միայն առցանց տարածքում, որը պոստմոդեռն ժամանակի ծնունդ է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

СТРАУСЕ, КОРБИН 2001
Страусе, А., Корбин Д., Основы качественного исследования: обоснованная теория, процедуры и техники, Москва, «Эдиториал УРСС» 2001.

BRUBAKER 2013
Brubaker J.R., Hayes G.R., Dourish P., Beyond the Grave: Facebook as a Site for the Expansion of Death and Mourning // The Information Society: An International Journal, 2013, 29:3, 152–163. https://doi.org/10.1080/01972243.2013.777300

CESARE, JENNIFER 2017
Cesare N., Jennifer B., Mourning and memory in the twittersphere // Mortality, 2017, 23:1, 1–16. https://doi.org/10.1080/13576275.2017.1319349

CHURCH 2013
Church S.H., Digital Gravescapes: Digital Memorializing on Facebook // The Information Society, 2013, 29:3, 184–189. https://doi.org/10.1080/01972243.2013.777309

DEGROOT 2012
Degroot J.M., Maintaining Relational Continuity with the Deceased on Facebook // OMEGA - Journal of Death and Dying, 2012, 65:3, 195–212. https://doi.org/10.2190%-2FOM.65.3.c

IRWIN 2015
Irwin, M.D., Mourning 2.0—Continuing Bonds Between the Living and the Dead on Facebook // OMEGA - Journal of Death and Dying, 2015, 72:2, 119–150. https://doi.org/10.1177%2F0030222815574830

KLAASSENS at al. 2014
Klaassens, M., Bijlsma, M., New Places of Remembrance: Individual Web Memorials in the Netherlands // Death Studies, 2014, 38:5, 283–293. http://doi.org/10.1080/07481187.2012.742474

ROBERTS 2004
Roberts, P., The Living and the Dead: Community in the Virtual Cemetery // OMEGA - Journal of Death and Dying, 2004, 49:1, 57–76. https://doi.org/10.2190/D41T-YFNN-109K-WR4C

VRIES et al. 2004
Vries, B. d., Rutherford, J., Memorializing Loved Ones on the World Wide Web // OMEGA - Journal of Death and Dying, 2004, 49:1, 5–26. https://doi.org/10.2190%2FDR46-RU57-UY6P-NEWM

WALTER 2015
Walter, T., Communication media and the dead: from the Stone Age to Facebook // Mortality, 2015, 20:3, 215–232. http://doi.org/10.1080/13576275.2014.993598

WALTER et al. 2012
Walter, T., Hourizi, R., Moncur, W., Pitsillides, S., Does the Internet Change How We Die and Mourn? Overview and Analysis // OMEGA - Journal of Death and Dying, 2012, 64:4, 275–302. https://doi.org/10.2190%2FOM.64.4.a

WILLIS, FERRUCCI 2017
Willis, E., Ferrucci, P., Mourning and Grief on Facebook: An Examination of Motivations for Interacting With the Deceased // OMEGA - Journal of Death and Dying, 2017, 76:2, 122–140. https://doi.org/10.1177%2F0030222816688284

Համացանցային աղբյուրներ

HUSSMAN 2014
Hussman, R., Death in The Digital Era: Grieving on Facebook // Academia Edu: https://www.academia.edu/6911495/DEATH_IN_THE_DIGITAL_ERA_GRIEVING_ON_FACEBOOK (last access 09.11.2019)

Smbat H. Hakobyan
Institute of Archaeology and Ethnography

DEATH IN ARMENIAN FACEBOOK: TRADITIONAL, MODERN, OR POSTMODERN GRIEF?

Keywords: digital anthropology, digital death, social media, Facebook, online grief, and bereavement.

The development of digital technologies and online platforms entailed many changes and shifts in people's lives. Many elements of culture once belonged exclusively to the offline sphere, started to appear online as well. One of those phenomena is death. Now we can find numerous sites devoted to death, grieving, and loss. Death even "invaded" social networks, where it is actively discussed, in particular from the perspective of grief and bereavement. In the Armenian language Facebook, one can find a lot of posts related to death, most of which can be categorized as grieving posts.

First, Facebook serves as a new means to spread the news about death and upcoming funerals. It also helps people to continue their relations with deceased relatives. Many people talk to them directly in their posts, and it leaves the impression that the dead person can see or read the massage. Users can even tag the dead person and make his/her profile more apparent and accessible for the griever's social network. Generally, grieving on Facebook is more interactive and intensive: one can post pictures, and videos of the deceased person, write some memories, or express some emotions related to his/her loss and receive comments from friends on Facebook.

Theoretically, digital or online grief has been considered more open, informal, emotional, and intensive than offline. In social networks, people grieve more openly, because they don't see each other, and formal rituals of mourning have been substituted by individuality and diversity of posts, where the shift from actions to text and discourse took place. But while analyzing data from Armenian Facebook, I noticed that they don't match with those theoretical positions – in my case grieving remains very formal, people did not express their emotions and thoughts as freely as in the case of English Facebook users, furthermore, people rather post much more about deaths of famous people than about their close relatives and loved ones.

To explain this difference between grief in Armenian Facebook and the main positions in the theory of online grief I will refer to historical stages of death and grief developed by Tony Walter. He suggests that traditional death was communal, but then comes the age of modernity, and death disappeared from public space. Grieving now is an individual and latent practice, but then in the period of postmodernity death returns to the public arena, but as an individual experience. When we look at the last developments in Armenian society and funeral culture, we notice that grieving remains traditional and formal on Facebook. Some 5 years ago, people organized funerals in their homes and mourned in the yards of multi-family residential. People don't express their emotions and thoughts very openly on social networks but the same happens in funeral houses, which have been the main place for funerals in recent years. The grief in Armenian Facebook resembles the modern one in Western countries. But both these traditional and modern features of grief take place in a postmodern environment and condition – the digital age with online networks.

Смбат Акопович Акопян

Институт археологии и этнографии

СМЕРТЬ В АРМЯНСКОМ ФЕЙСБУКЕ: ТРАДИЦИОННАЯ, МОДЕРНОВАЯ ИЛИ ПОСТМОДЕРНОВАЯ СКОРБЬ?

Ключевые слова: цифровая антропология, цифровая смерть, социальные сети, Фейсбук, онлайн-горе и скорбь.

Развитие цифровых технологии и онлайн-платформ повлекли за собой многие изменения и перемены в жизни. Многие элементы культуры и быта, которые раньше принадлежали исключительно к офлайн-среде, теперь появляются и онлайн-пространстве. Одним из таких является смерть. В наши дни мы можем найти в интернете большое количество сайтов, связанных со смертью, скорбью и потерей родного человека. Смерть даже ворвалась в социальные сети, где она активно обсуждается в основном в перспективе скорби и тяжёлой утраты. В армяноязычном Фейсбуке мы можем встретить много статусов про смерть, большинство из которых можно отнести к статусам скорби.

Фейсбук служит новым способом распространения новости о смерти и информации про грядущие похороны. Он также помогает людям продолжать отношения с их умершими родственниками. Многие пользователи общаются с умершими близкими напрямую через статусы, и складывается впечатление, что покойный может увидеть или прочитать сообщение. В некоторых

случаях люди даже отмечают умершего, таким образом делая его или ее профиль более видимым и доступным для социального окружения скорбящего. В целом скорбь в Фейсбуке более интерактивна и интенсивна: пользователи могут публиковать фотографии, видео покойного или они могут выражать свой эмоции и мысли о потере родного и получать комментарии от друзей.

В теоретической литературе принято считать, что онлайн-скорбь является более открытой, более неформальной и более интенсивной. В социальных сетях люди скорбят более открыто, потому что они не видят друг друга, а формальные ритуалы причитания заменились индивидуальными и разнообразными статусами. Анализируя материал из армянского Фейсбука, мы заметили, что эти теоретические выводы не совпадают с нашими данными. В данном случае скорбь остаётся довольно формальной, и пользователи не выражают свои мысли и эмоции так открыто, как на англоязычных сайтах. Более того, большинство «скорбящих» статусов посвящено знаменитым людям, а не близким родственникам.

Для того чтобы объяснить разницу между скорбью в армяноязычном Фейсбуке и основными теоретическими выводами онлайн-скорби будет использована теория исторических этапов смерти и скорби Тони Уолтера. Согласно ему, смерть в традиционную эпоху была общинной, но потом приходит эпоха модерна, и смерть исчезает из публичной сферы. Теперь скорбь считается частной и скрытной практикой, но потом в период постмодерна смерть возвращается в публичную жизнь, но как индивидуальный опыт. Последние изменения и трансформации в армянском обществе и похоронном ритуале показывают, что скорбь в Фейсбуке осталась очень традиционной и формальной, потому что всего 5 лет назад люди организовывали общинные и публичные похороны в квартире и во дворе многоэтажных зданий. Люди не выражают много эмоций в Фейсбуке и в похоронных домах, где сейчас организуется большинство похорон. В этом плане скорбь в армянском Фейсбуке очень похожа на модерновую скорбь западных стран. Обе - традиционные и модерновые особенности скорби выражаются в обстановке постмодерна, в цифровую эпоху с онлайн-сетями.

Ներկայացվել է՝ 05.10.2022,
գրախոսվել է՝ 09.11.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5